**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16-4**

ք.Երևան «30» « 11 » 2018թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, (գործելով Հայաստանի Հանրապետության անունից), ի դեմս ծառայության պետ Ա.Մխոյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Գնորդ»), մի կողմից, և «Էլիտ-ֆուդ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Կիրակոսյանի (այսուհետ՝ «Վաճառող»), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 27.04.2018թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16-4 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 և 8.8 կետերը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների թվաքանակը, կապված համաներման հետ, էական նվազել է, Գնորդի նախաձեռնությամբ կողմերը որոշեցին՝ Պայմանագրի N1 հավելվածով՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ով, նախատեսված՝ 4-րդ եռամսյակի ընթացքում, մատակարարման ենթակա 6000 կգ «հնդկաձավար» ապրանքատեսակի քանակը նվազեցնել 3000 կգ-ով, որի գումարը կազմում է՝ 747000 (յոթ հարյուր քառասունյոթ հազար) ՀՀ դրամ, քանի որ նշված քանակի չափով վերացել է «հնդկաձավար» ապրանքատեսակի գնման պահանջը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, կատարել ֆինանսական հատկացումների նվազեցում և այդ գումարի չափով նվազեցնել Պայմանագրի գինը:

1.2 Պայմանագրի 3.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Պայմանագրի գինը կազմում է 3486000 (երեք միլիոն չորս հարյուր ութսունվեց հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

1.3 Պայմանագրի N1 հավելվածի՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի, 15-րդ չափաբաժնի սյունակը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N1-ի:

1.4 Պայմանագրի N2 հավելվածը՝ «վճարման ժամանակացույց»-ը, հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N2-ի:

## 2. Այլ պայմաներ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16-4 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և իր N1 և N2 հավելվածները կազմված են 5 էջից հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, համաձայնագրի N1 և N2 հավելվածները, համարվում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ քրեակատարողական
ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց -63
ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

Ծառայության պետ՝
Ա. Մխոյան

(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Էլիտ-ֆուդ» ՍՊԸ
ք. Երևան, Էրեբունի փ. 23/17
ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 1150015793390100
ՀՎՀՀ 00119157

Տնօրեն՝
Ա. Կիրակոսյան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 1
«30» «11» 2018թ. կնքված
N 1 Համաձայնագրի
N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16-4 ծածկագրով պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ 15-ՐԴ ՉԱՓԱԲԱԺԻՆ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | Մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| 15 | 15616000/1 | հնդկաձավար | ООО "Боркрупы" ՌԴ | Սերտիֆիկացված ՀՍՏ-ով կամ ԳՕՍՏ-ով: Հնդկաձավար 1-ին տեսակի, խոնավությունը՝ 14,0 %-ից ոչ ավելի: Ստացված բարձրակարգ հնդկաձավարի մշակումից, թաղանթի հեռացումը միջուկից ոչ շոգեխաշման եղանակով: Միջուկը ամբողջական՝ 1.6*2մմ, առանց վնասատուների և խառնուրդների: Փաթեթավորումը գործարանային՝ 25-50 կգ պարկերով: Պատրաստման և պահպանման ժամկետը նշված լինի պարկի վրա: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս, քան 80%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ | կգ | 249 | 3486000 | 14000 | ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության հիմնարկներ՝ համաձայն բաշխման ցուցակի | 14000 | 2018թ. 2-րդ եռամսյակ 6000 կգ, 3-րդ եռամսյակ 5000 կգ, 4-րդ եռամսյակ 3000 կգ, եռամսյակների ընթացքում, ոչ ուշ մինչ 15.12.2018թ. |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 9-րդ հոդվածների: | | | | | | | | |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց -63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011474534
ՀՎՀՀ 02204739

Ծառայության պետ
Ա.Մխոյան

(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Էլիտ-Ֆուդ» ՍՊԸ
ք. Երևան, Էրեբունի փ. 23/17
ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 1150015793390100
ՀՎՀՀ 00119157

Տնօրեն՝
Ա. Կիրակոսյան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
«30» «11» 2018 թ. կնքված
N 1 Համաձայնագրի
N ՀՀ ԱՆ ՔԿԿ-ԳՀԱՊՁԲ-18/16-4 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | ընդամենը |
| 15 | 15616000/1 | հնդկաձավար | - | 1494000 | 2739000 | 3486000 | 3486000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ քրեակատարողական
ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց -63
ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011474534
ՀՎՀՀ 02204739

Ծառայության պետ
Ա.Մխոյան

(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Էլիտ-ֆուդ» ՍՊԸ
ք. Երևան, Էրեբունի փ. 23/17
ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 1150015793390100
ՀՎՀՀ 00119157

Տնօրեն՝
Ա. Կիրակոսյան

(ստորագրություն)
Կ.Տ